

ԲԱԳԻԱՅ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ-
ԸՆԹԵՐՑԱՐԱՆԻ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԱՍՆ 1898 Թ.

(ՀԱՇԻԻ ԿՐԱԿԱՐԱՆԱՊԵՏԻ)

Ա. ԸՆԹԵՐՑԱՐԱՆ

Յընթացս 1898 թ. Բ. Հ. Մ. Բ. Գրադարան-Ընթերցարանում սրաց-
ում էին հետևեալ հալոց պարբերական հրատարակութիւնները.

Օրաթերթեր՝ Արձագանք, Բիւզանդիոն, Մշակ, Նոր-Վար (4), Շա-
րաթաշերթ՝ Տարազ (1):

Ամսագիրներ՝ Աղբիւր, Արարատ, Արեւիկան մամուլ, Բազմապէս, Հան-
դէս ամսօրեակ և Մուրճ (6):

Կիտաճեայ հանդէսներ՝ Ազգագրական հանդէս, Լուսմալ (2):

Թուսերէն՝

Օրագիրներ. Биржевыя Вѣдомости, Кавказъ, Каспій, Міровые от-
голоски, Московскія Вѣдомости, Новое Время, Новости, Новое Обзор-
ѣніе, Одесскій Листокъ, Русскія Вѣдомости, С.-Петербургскія Вѣ-
домости, Сынъ Отечества, Тифлисскій Листокъ (13).

Շարաթաշերթեր՝ Бакинскія Губернскія Вѣдомости, Будильникъ,
Будьте Здоровы, Вокругъ Свѣта, Журналь Новѣйшихъ Открытій
и Изобрѣтеній, Всемирная Иллюстрація, Живописное Обзорѣніе,
Нива, Недѣля съ книжками, Кавказское Сельское хозяйство, Приро-
да и Люди, Россія и Азія, Стрекоза, Петербургская жизнь (14).

Ամսագիրներ՝ Вопросы Философіи и Психологіи, Вѣстникъ Воспи-
танія, Вѣстникъ Европы, Вѣстникъ Иностран. Литературы, Вѣст-
никъ Благотворительности, Журналь Журналовъ, Историческій Вѣст-
никъ, Міръ Божій, Наблюдатель, Научное Обзорѣніе, Новь, Жизнь

и Искусство, Новый Журналь Иностран. литературы, Русское Богатство, Русская Мысль, Русская Старина, Русская Школа, Образование, Сѣверный Вѣстникъ, Театраль, Труды Вак. Отд. Импер. Русск. Техн. О-ва և *Ֆրանսերէն՝ Revue des revues.*

Մտնական տնտաբներ՝ Вскоды, Досуѣ и Дѣло, Дѣтское Чтеніе съ прил. „Педагогическій Листокъ“, Дѣтскій Отдыхъ, Задушевное Слово, Игрушечка съ прил. „На помощь матерямъ“, Малютка, Родникъ съ прил. „Воспитаніе и Обученіе“.

Պարբերական հրատարակութիւններ ստացուած էին ընդամենը՝ հալերէն 13, ուսերէն 60:

Յաճախորդների թիւը 1898 թւի ընթացքում եղած է ընդամենը 26.434: Այս թիւը ցույց է տալիս ոչ այն, թէ քանի անձինք են օգտուել ընթերցարանից, այլ միայն՝ այն, թէ քանի անգամ են օգտուել: Յաճախորդներ կան, որոնց համար լրագրական նորութիւններին հետեւելը դարձել է պահանջ, և դոքա ամեն օր պիտի մտնեն ընթերցարան. կան և այնպիսիները, որոնք չաճախում են պատահաբար կամ նաչած իրանց անձնական գործերի չարմարութեան: Եւ այսպիսով, մէկը կարող է տարւայ ընթացքում մի հարիւր անգամ մուտք գործել ընթերցարանը, այն ինչ մի ուրիշը անհամեմատ աւելի քիչ օգտւած պիտի լինի նոյն հաստատութիւնից: Հետաքրքրական կը լինէր ուրեմն իմանալ նաև այն, թէ իսկուպէս քանի հոգի են չաճախել ընթերցարանը: Գորահամար հարկաւոր է մտածել մի հնար, որով կարելի լինի այդ նպատակին հասնել, միայն, ի հարկէ, մի պայմանով, որ պ. պ. չաճախորդները չծանրաբեռնուեն ձևականութիւններով՝ նախ քան ընթերցարան մտնելը:

Վերև նշանակած թիւը, այն է՝ 26.434, օրւայ հաշւի զցելով, ստանում ենք 72, որ նշանակում է, թէ ընթերցարանը միջին թւով ունեցել է օրական այդքան չաճախորդ:

Ըստ ազգութեան, չաճախորդների ահազին տոկոսը կազմում են հալերը, չերոյ ուսաները և սպա ալլազգիք, ինչպէս այդ երևում է ներքև բերած թւերից՝

| | |
|----------------------|---|
| Հալեր | 20.195 կամ 76 ¹ / ₂ % |
| Ռուսներ | 4.300 կամ 16 ¹ / ₂ % |
| Ալլազգիներ | 1.939 կամ 7 ¹ / ₂ % |

Ալլազգիների մէջ իրանց թւով աչքի են ընկնում հրէաները:

Ըստ պարագմանց, չաճախորդները դասուորւած են հետեւեալ կերպով՝

| | |
|---|-------|
| Մասնաւոր ծառայութեան մէջ եղածները | 4.963 |
| Վաճառականներ | 2.382 |
| Ուսանողներ | 1.261 |
| Ուսուցիչներ | 691 |

| | | |
|--------------------------------|--------|--------|
| Արհեստագործներ | 1.769 | |
| Գեղարվեստագէտներ | 494 | |
| Ծովագնացներ | 1.165 | |
| Աստիճանաւորներ | 463 | |
| Ինժինէր-տեխնիկ | 559 | |
| Բժիշկ և իրաւաբան | 52 | |
| Հողերակահներ | 49 | |
| Թղթակիցներ | 32 | |
| Գիւղատնտես-կալածատէր | 31 | |
| Անգործներ | 12.523 | (աւելի |

ճիշտ՝ գործ փնտրողներ):

Ալերջին թիւը, այն է՝ անգործներինը, ակամաջ ուշադրութիւն է գրաւում իւր վրայ կազմելով տարեկան չափաւորողների թւի համարեա կէսը, որ բնորոշ է Բաքուի նման քաղաքի համար, ուր շարունակ գործ փնտրողների անազին հոսանք է մտնում: Այս վերջին դասակ չափաւորողների համար մասնաւորապէս ներկայ հաստատութիւնը անշուշտ մի մտաւոր ապաստարան է ներկայացնում: Մեզ թւում է, որ սրիպլաճ լինելով շար անգամ ամիսներով պարապ մնալ և գործի չուսով դեգերել քաղաքում, ալիպիսիների կեանքը կը լինէր անխորհուրդ, ձանձրալի, երբևէն նոցն իսկ չուսահարական, եթէ միայն չլինէր այս ընթերցարանի նման մի հաստատութիւն, որտեղ նոքա կարողանում են օգտուէր կերպով գործադրել իրանց ժամանակը, ստանալով մտաւոր սնունդ և գուցէ նաև մի փոքրիկ միսթարութիւն:

Աերադառնալով վերե բերած թւերին, մենք չենք կարող թազցնել մեր հետեւել ղիտողութիւնը: Այդ թւերը անպալման ճշգրիտ պարկեր չեն ներկայացնում ընթերցարանից օգտւողներին: Աւ ահա ինչու Յաճախորդների մէջ սակաւ չեն պատահում այնպիսիները, որոնք չեն ակտրոժում, ընթերցարան մտնելուց առաջ, մօտենալ օրագիր մտրեանին և այնտեղ նշանակել, թէկուզ կրճատւած բառերով, իրանց անուն ազգանունը, պարապմունքը և ազգութիւնը: Թէ ինչից է առաջ գալիս այդ անուշադրութիւնը դէպի գրադարան-ընթերցարանի կարգ ու կանոնները, մենք սուղ մասին չենք խօսում: Բայց որ ալիպիսի անփութ վերաբերմունքից մի դասակ թերութիւն է մտնում ներկայ հաստատութեան ընթացիկ կեանքի մէջ, ալդ հաստատապէս շեշտում ենք:

Բայց ալդ չէ միակ չարիքը: Մեղ պատահել է տեսնել ընթերցարանում պարկերազարդ շարաթաթերթեր՝ մէջտեղից կիսւած, ամսագիրների միջից թերթեր պոկւած, լուսանցքների վրայ ընթերցողի նկարողութիւններ արւած և որդերը սկամ գունաւոր մատրտով ընդգծւած: Գեռ աւելին կ'ասենք: Տեղի են ունեցել և էլ աւելի վատթար դէպքեր. սեղանի վրալից մի քանի անգամ անհետացել են ամսագիրներ!

իրաւ է, նման դէպքեր տեղի են ունեցել և այլ ուր, ինչպէս, օրինակ, Խարկովի հասարակաց մատենադարանում, որի տասնամեալ տեղեկագրի մէջ (1886—1896 թ.), ի միջի այլոց, աւած է, թէ՛ «գրադարանի վարչութիւնը ցաւելով պիտի համոզւէր, որ չաճախորդների մէջ (արդեօք չաճախորդներ են դարձաւ) դրնուում են անձինք, որոնք թեթևութեամբ են վերաբերում դէպի օտարի սեփականութիւնը...» Բայց սա մխիթարական չէ մեզ համար: Վերև բերած ֆակտերը—իրողութիւններն են, որ մենք այստեղ արձանագրում ենք:

Բ. Գ Ր Ա Ղ Ա Ր Ա Ն

Յընթացս 1898 թ. Գրադարանը ունեցել է նոր բաժանորդներ ընդամենը 663 հատ, չհաշւած այն բաժանորդներին, որոնք գրւած էին նախորդ տարւանից:

Այս բաժանորդների թիւը, ըստ սեռի, արտաչափուում է հետևեալ կերպով.

| | |
|--------------------------|-----|
| Տղամարդ | 510 |
| կին | 153 |
| Ըստ ազգութեանց՝ | |
| Հայ | 326 |
| Ռուս | 229 |
| Այլազգի | 108 |
| Ըստ պարապմանց՝ | |
| Ուսանող | 133 |
| Ուսուցիչ | 25 |
| Վաճառական | 37 |
| Գործակալարար-հաշւապահ | 124 |
| Առ րիճանաւոր | 26 |
| Արհեստաւոր | 34 |
| Արրիստ | 8 |
| Մովազնաց | 14 |
| Ինժինէր-տեխնիկ | 10 |
| Բժիշկ | 2 |
| Անորոշ | 20 |
| Անգործ | 225 |

Յընթացս 1898 թ. գրադարանից բաց թողած գրքերի թիւը եղած է ընդամենը 15.410:

Վերև նշանակած թւից վերցւած են գրքեր՝

| | |
|-----------------------------|--------|
| Ռուսերէն | 13.022 |
| Հայերէն | 2.356 |
| Օտարազգեալ գրական | 32 |

Այստեղից երևում է, որ ուսաց բաժինը մի ճնշող թիւ է կազմում՝ համեմատած հաշերէն և օրարագրեալ բաժիններէ հետ։ Եւ այդ բնական է, քանի որ գրադարանում եղած ուսերէն գրքերը իրանց քանակով և հարուստ ճիւղերով նոյն չափով ահագին թիւ են կազմում՝ միւս բաժինների հետ համեմատած։

| | | | |
|-----------------|---|---|---------------|
| Ռուսաց բաժին | } | I Ատուածաբանական գրքեր | 20 |
| | | II Փիլիսոփայական | 445 |
| | | III Քաղաքագիտական | 147 |
| | | IV Պարմական աշխարհագրական | 475 |
| | | V Բնագիտական | 258 |
| | | VI Բեղէնորիստիկա | 9.766 կամ 75% |
| | | VII Տեղագրական | 5 |
| | | VIII Պարբերական հրատարակութիւններ | 1.914 կամ 15% |
| | | IX Կովկասագիտութիւն | 22 |
| | | X Օրարագրեալ գրականութ. | 32 |

Ուշադրութեան առնելով այս թւերը, մենք տեսնում ենք, որ գեղեցիկ դպրութեան վերաբերեալ կարդացած գրքերը իրանց քանակով առաջին տեղն են բռնում, կազմելով բաց թողած գրքերի 75%: Ի բաց առեալ տեղագրական բաժինը, բաժանորդների կողմից ամենաքիչ պահանջ եղած է ատուածաբանական գրքերի վերաբերմամբ։ Պարբերական հրատարակութիւնները երկրորդ տեղն են բռնում բեղէնորիստիկայից չեղող և կազմում են 15%: Լուրջ գրականութեան պահանջը, ինչպէս երևում է վերև բերած թւերից, սաստիկ թույլ է, քանի որ փիլիսոփայական, քաղաքագիտական-հասարակագիտական, պատմական, բնագիտական և կովկասագիտական բոլոր կարդացած գրքերը միասին առած՝ կազմում են ուսերէն լեզուով բաց թողած գրքերի հազիւ 10%-ը։

Գրեթէ նոյնը նկատելի է և հայոց բաժնի վերաբերմամբ։

| | | | |
|----------------|---|---|---------------|
| Հայոց բաժին | } | Ա. Ատուածաբանական գրքեր | 20 |
| | | Բ. Փիլիսոփայական | 73 |
| | | Գ. Պարմական | 132 |
| | | Դ. Քաղաքագիտական | 4 |
| | | Ե. Բնագիտական | 34 |
| | | Զ. Գեղեցիկ դպրութիւն | 2.063 կամ 88% |
| | | Է. Պարբերական հրատարակութիւններ | 30 |

Լուրջ գրականութեան բոլոր ճիւղերը միասին առած՝ կազմում են հազիւ 12%:

Քանի որ գեղեցիկ դպրութեան ճիւղը մի աչտափ ահագին տոկոս է կազմում, արժէ ուրեմն վերջը ինչ աւելի երկար կանգ առնել նոյն աչք բաժնի վրայ։ Բեղէնորիստիկայի բաժինը, ըստ մեր գրացուցակների, պա-

րունակում է իւր մէջ աչնւլիսի մասնաճիւղեր, որ, առանց պարզաբանութեան, խառնաշփոթութիւն կարող է ծագեցնել մեր մտքի մէջ Գեղեցիկ դպրութեան մէջ, ըստ գրացուցակի, մոցրած են ոչ միայն վէպ, դրամա և զուտ բանաստեղծութիւն, այլ և քննադատութիւն ու գրականութեան պատմութիւն և մանկական գրքեր: Հարկաւոր է ուրեմն այս բաժինը վերաճել մասնաճիւղերի: Եւ աւսպիտով մենք կը ստանանք, որ 9766 բելլե-տրիստրիկական գրած քննարկից կարդացած են.

| | | | |
|-----------------|---|---|-------|
| Ռուսաց բաժին | } | Մանկական գրքեր | 1.331 |
| | | Քննադատական և գրական պատմութիւն | 220 |
| | | Վէպեր | 7.571 |
| | | Դրամաներ | 354 |
| | | Զուտ բանաստեղծութիւններ | 299 |

Հաւրէն 2.063 բելլետրիստրիկական գրած քննարկից կարդացած են.

| | | | |
|----------------|---|------------------------------|-------|
| Հայոց բաժին | } | Մանկական գրքեր | 247 |
| | | Վէպեր | 1.629 |
| | | Դրամաներ | 110 |
| | | Բանաստեղծութիւններ | 77 |

Ի նկատ առնելով վերև բերած թւերը, մենք տեսնում ենք, որ ռուսաց բաժնում քննադատութիւններ և գրականութեան պատմութեան վերաբերեալ գրքեր համեմատաբար սակաւ են կարգացում, և որ ընթերցողների ահադին մեծամասնութեանը հետաքրքրում են առաւել (գանազան) ստեղծագործական արկածների պատմութիւնները, քան թէ այդ երկարութիւնների քննական վերլուծումը և գնահատութիւնը: Հաւրէնին գալով, մեր եզրակացութիւնը միանգամայն անմխիթարական է, որովհետև քննադատական ծիւղը փակում է իւր կտորարեալ բացակայութեամբ: Սակաւն որքան տիրալի է այս երեւոյթը, նույնքան էլ պարզ և հասկանալի է: Չէ որ հայոց նորագոյն գրականութիւնը մինչև օրս դեռ չէ արդարեւ մի հար քննադատ: Մենք չենք կարող ասել, թէ այս ինչ հեղինակը մեր քննադատն է, ինչպէս ասում ենք, օրինակ, թէ Բաֆֆին մեր վրայասանն է, Պատկանեանը—մեր բանաստեղծն է, Սունդուկեանը—մեր դրամատուրգն է, թէև, պէտք է խոստովանել, վերջին տարիներս մի առանձին շարժում է նշմարում քննադատութեան մէջ (նոր երեւոյթ), և քննադատների դէմքեր են սկսում կամաց-կամաց որոշել:

Մանկական և քննադատական բաժինը հանելով բելլետրիստրիկալի միջից, մենք տեսնում ենք, որ զուտ բելլետրիստրիկալից կարդացած են.

| | |
|--------------------|------|
| Ռուսերէն | 8215 |
| Հայերէն | 1816 |

Հետաքրքրողների համար ներքև մենք կ'ըշխանակենք պօէզիակերբեր գլխաւոր ձիւղերի համեմատական թւերը և սովորները:

Ձուր բեղերի տրվելուց կարդացած են՝

| | | |
|--------------|---|---|
| Ռուսաց բաժին | $\left\{ \begin{array}{l} \text{Վէպեր} \\ \text{Դրամաներ} \\ \text{Բանաստեղծութիւններ} \end{array} \right.$ | 7571 կամ 42 ⁰ / ₁₀₀ |
| | | 354 " 4,3 ⁰ / ₁₀₀ |
| | | 299 " 3,7 ⁰ / ₁₀₀ |
| Հայոց բաժին | $\left\{ \begin{array}{l} \text{Վէպեր} \\ \text{Դրամաներ} \\ \text{Բանաստեղծութիւններ} \end{array} \right.$ | 1629 կամ 89,7 ⁰ / ₁₀₀ |
| | | 110 " 6,3 ⁰ / ₁₀₀ |
| | | 77 " 4,3 ⁰ / ₁₀₀ |

Այս թւերը ցոյց են տալիս, որ վէպը անպայման գերիշխում է պօէզիայի միտ ձևերի վրայ։ Եւ այդ հասկանալի է, քանի որ XIX դարը, ինչպէս գիտութեան համար, բնական գիտութիւնների զարգացման դար էր, գեղեցիկ դպրութեան համար էլ վիպագրութեան դար էր որ արտադրեց բազմաթիւ փալտեմ անուններ և իւր բեղմնատուրութեամբ հեղեղեց եւրոպական գրականութիւնը ան աստիճան, որ սուրբի մէջ մնացին բանաստեղծութիւնը և դրաման, գեղարեստի այս թագն ու պատկը։ Նիթէ XVIII դարը արտադրեց Լեսսինգ, Շիլլէր և Գէթէ, թատրերգութեան առաջին մեծութեան աստղեր, XIX դարն էլ արտադրեց Բալզակ, Տոլստոյ, Ջուլա և ուրիշ շատ նշանաւոր անուններ՝ իրանց լեզուները հետեւողներով, որոնք մի փառաւոր բարձրութեան հասցրին վիպական պօէզիան։

Վերադառնալով պարբերական հրատարակութիւններին, որոնց թիւը 1894 էր, մենք այստեղ հարկաւոր ենք համարում աւելացնել, որ այդ թիւ մէջ մտնում են նաև մանկական ամսագիրները, թիւով 237 հատոր։

Այս բոլորից զատ, գրադարանից տրուում են գրքեր ընթերցարանի ֆանդատներին, առանց աւելորդ վճարի, առանձնասենեակում կարդալու համար։ Բաց այս տեսակ ընթերցողների վերաբերմամբ պակասում են վիճակագրական տեղեկութիւններ, որովհետև սոցա համար օրագիր-մատենան սկսած ենք պահել սեպտեմբեր ամսից։ Չորս ամսուայ մէջ ստացւած թիւը ցոյց է տալիս, որ տարւայ ընթացքում հարիւրներով կարելի է համարել գրադարանի գրքերից այդ ձևով օգտուողների անունները։

Դեռ ես ի մօտոյ ծանօթ չլինելով այս հատորութեան անցիակին, մենք դժուարանում ենք որոշակի ասել, թէ որքան արագ է աճել, տարիների թիւ համեմատ, գրադարանի գույքը, ընթերցողների թիւը և բաց թողած գրքերի քանակութիւնը։ Բաց որ գրադարանը, սկսելով շատ փոքրիկ ծաւալով, վերջին տարիներս հասել է մի բաւական գոհացուցիչ գրութեան, դա ամեն մի կասկածից դուրս է, բաւական է միայն համեմատել վերջին երեք տարիների ընթացքում գրադարանից բաց թողած գրքերի թիւը, որ եղած է՝

| | | |
|--------------------------|---------------------------|---------------------------|
| 1896 թ. 11.303 | 1897 թ. 12.300 | 1898 թ. 15.410 |
| Այս Բւերեց՝ | | |
| Հաչերէն 1.615 | Հաչերէն 2.130 | Հաչերէն 2.356 |
| Ռուսերէն 9.688 | Ռուսերէն 10.170 | Ռուսերէն 13.022 |

Այս թւերից ակնադրոյնի կերպով երևում է, որ բաց թողած գրքերի թիւը րարէցրարի անել է. անտարակուս է, որ նոյն առաջընթացութեամբ անկացած պիտի լինէր նաև գրադարանի բաժանորդների թիւը և գրացուցակի ծաւալը:

Բայց չիշտապակելով այս ուրախալի երևոյթը, մենք հետու ենք արև մտքից, որ իբր թէ գրադարան-ընթերցարանը զերծ է թերութիւններից: Ընդհակառակը, կան պակասութիւններ, որ գրադարանի վարչութիւնը ինքը իւր աչքով տեսնում է և նոցա վերացնելու մասին հոգադար է. կարող են լինել թերութիւններ, որոնք վրիպած կը լինեն վարչութեան աչքից, բայց նկատուած զրոյցիներից: Ահա այս կողմնակի անձանց նկատողութիւնները և խորհուրդները ուրախութեամբ կ'ընդունեն վարչութեան կողմից և ապագայում ի նկատ կ'առնեն՝ այս օգտակար հաստատութեան վիճակը աւելի և աւելի բարւոքելու համար:

Գրադարան-ընթերցարանի ղեկավարող մարմինը աշխարհի է և նոյնը պիտի շարունակէ ալտուստ՝ միշտ թարմ պահել իւր դոչքը ուսուցչ, հայոց և եւրոպական գրականութեան նորանոր արտագրութիւններով: 1898 թ. վերջը լոյս տեսաւ ուսուցչ բաժնի 1-ին լրացուցիչ գրացուցակը, որի մէջ մտած են 2000-ից շատ աւելի նոր գրքեր և արդէն կիրառութեան մէջ են. շուտով լոյս կը տեսնի նաև հայոց 2-րդ լրացուցիչ գրացուցակը:

Բայց այնուամենայնիւ կան բաժիններ, որ համեմատաբար աղքատ են: Հարստացնել այդ բաժինները — գրադարանի վարչութեան առաջիկայ հոգսերից մէկը կը լինի:

Ինչպէս կարելի է եզրակացնել շարքերի խորհրդի կողմից այս ժողովին ներկայացրած հաշվետւութիւնից, ընկերութիւնը գրադարան-ընթերցարանի վրայ գործադրելու զրամական ընդարձակ միջոցներ չունի: Այն ինչ այս հաստատութիւնը, մի կենդանի գործ լինելով, պահանջում է, որ իւր ունեցած գոչքը անընդհատ հարստացնեն, բաժինները ճոխացնեն: Բայց հասցնել նորան այն աստիճանի, որ տեղիս ընթերցող հասարակութիւնը իւր ցանկացած հոգեկան սնունդը լիութի կարողանալ գոյնել այս տեղ — դա միանգամայն կախած է հասարակութեան ձեռնտւութիւնից: Ներկայ դէպքում հասարակական աջակցութիւնը գրադարան-ընթերցարանի առաջիմութեան զօրաւոր խթանը կարող է լինել, իսկ անտարբերութիւնը կարող է նորան ետ մղել դէպի անկում: Չէ որ իւրաքանչիւր հասարակութիւն ունենում է այնպիսի հաստատութիւն, որին ինքը — արժանի է:

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅՑ

(Գրողարանապետ):